ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-19/01 ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի նիստի

Գավառ, Կենտրոնական հրապարակ 7 **«25» «03» 2019թ.**
ժ 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Յուրա Մուշեղյան /ԳԱՊ/,
Հանձնաժողովի անդամներ Արմեն Զոհրաբյան /ԲԱ/, Գևորգ Խաչատրյան/ԲԱ/
ՎալերՀոդաբաշլան/ԳԱ/, Գուրգեն Մելքոնյան/ԳԱ/
Հանձնաժողովի քարտուղար՝ Արթուր Բաղեյան/ՄՀՄ/

ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-19/01 ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի նիստի օրակարգ
Յուրա Մուշեղյան

1. Գների նվազեցման շուրջ բանակցությունների վարում N 1-ին, 5-րդ, 6-րդ, 10-րդ, 11-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 25-րդ, 29-րդ, 31-րդ և 32-րդ չափաբաժինների մասով՝ <<Սմարթլայն>> ՍՊԸ-ի հետ:
2. Բանակցությունների արդյունքում գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներ ճանաչելու մասին որոշման ընդունում:
3. Պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:
4. 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներից պահանջել ներկայացնել հրավերով և հայտով սահմանված նախատեսված ապրանքի ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը:
5. Գնման ընթացակարգը չկայացած հայտարարել մասին որոշման ընդունում:
6. Տեղեկատվություն հայտերի վերաբերյալ հարցումների և պարզաբանումների մասին:
7. Հանձնաժողովի հաջորդ նիստի օրվա , ժամի և վայրի մասին որոշման ընդունում:

1. Գների նվազեցման շուրջ բանակցությունների վարում N 1-ին, 5-րդ, 6-րդ, 10-րդ, 11-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 25-րդ, 29-րդ, 31-րդ և 32-րդ չափաբաժինների մասով՝ <<Սմարթլայն>> ՍՊԸ-ի հետ

Քանի որ գնման ընթացակարգի N 1-ին, 5-րդ, 6-րդ, 10-րդ, 11-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 25-րդ, 29-րդ, 31-րդ և 32-րդ չափաբաժինների մասով մասնակցի գնային առաջարկը գերազանցում էր տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գնման հայտով սահմանված գինը, ուստի գնահատող հանձնաժողովը որոշել էր՝ Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի 5-րդ մասի բ/ ենթակետի դրույթներով՝ 2019 թվականին մարտի 25-ին, ժամը 11-00-ին ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի վարչական շենքի, N 206 աշխատասենյակում կազմակերպվել բանակցություններ, սակայն <<Սմարթլայն>> ՍՊԸ-ն չէր ներկայացել ներկայացել բանակցություններին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2. Քանի որ <<Սմարթլայն>> ՍՊԸ-ն չէր ներկայացել բանակցություններին, ուստի գնահատող հանձնաժողովը՝ N 1-ին, 5-րդ, 6-րդ, 10-րդ, 11-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 25-րդ, 29-րդ, 31-րդ և 32-րդ չափաբաժինների մասով՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշում չընդունեց:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

3. Գնահատող հանձնաժողովի որոշեց՝

''Գնումների գործընթացի կազմակերպման'' կարգի 43-րդ կետի 3-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

4. Գնահատող հանձնաժողովի որոշեց՝

''Գնումների գործընթացի կազմակերպման'' կարգի 43-րդ կետի 4-րդ մասի համաձայն՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից՝ <<Սմարթլայն>> ՍՊԸ-ից պահանջել երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել հրավերով և հայտով նախատեսված ապրանքի ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և ապրանքի տեխնիկական բնութագրերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

5. Գնման ընթացակարգը չկայացած հայտարարել մասին որոշման ընդունում.

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի 5-րդ մասի զ/ ենթակետի դրույթներով և ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի պահանջներով N 1-ին, 5-րդ, 6-րդ, 10-րդ, 11-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 25-րդ, 29-րդ, 31-րդ և 32-րդ չափաբաժիններով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ բանակցություններին մասնակցի չներկայանալու պատճառով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6. Ընդունել ի գիտություն, որ հայտերի վերաբերյալ հարցումներ և պարզաբանումներ չեն եղել

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

7. Գնահատող հանձնաժողովը որոշեց փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստ հրավիրել է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը՝ Գավառ, Կենտրոնական հրապարակ 7, Մարզպետարանի վարչական շենք, N 205 աշխատասենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Նախագահ՝ _____ Յու. Մուշեղյան

Անդամներ՝ _____ Վ. Հոդաբաշյան

_____ Գ. Մելքոնյան

_____ Ա. Զոհրաբյան

_____ Գ. Խաչատրյան

Քարտուղար՝ _____ Ա.Բաղեյան